ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(Հոգևոր ճեմարանի Մոսկվայի ճայոց)

ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՎԱՆՑՈՒ «ՋԱՄԲՌ»-Ը ՌՈՒՍԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

Սիմեոն Երևանցին Հայ Եկեղեցու նշանավոր կաթողիկոսներից մեկն է։ Նա, որպես եկեղեցական և քաղաքական գործիչ, մեծ դեր է խաղացել հայ ժողովրդի պատմության մեջ, ԺԸ դարի երկրորդ հիսնամյակում։ Նրա կաթողիկոսության տարիներին (1763—1780 թ. թ.) Մայր Աթոռն ապրել է տնտեսական բարգավաճման, հոգևոր զարթոնքի և մշակութային, կրթական վերելքի շրջան։ Հավատավոր, հայրենասեր և եռանդոտ կաթողիկոսը, չնայած ժամանակի աննպաստ պայմաններին, Ս. Էջմիածնում տպարան է հիմնել, 1771 թվականին թղթի գործարան է բացել և այլ բազմաթիվ եկեղեցաշեն գործեր կատարել։

Սիմեոն Երևանցին հայտնի է նաև որպես մատենագիր, փիլիսոփա և բարեկարգիչ։ Նրա գրչին են պատկանում մի շարք արժեքավոր պատմական, կրոնական, փիլիսոփայական աշխատություններ[1], որոնց մեջ հատուկ տեղ է գրավում «Ջամբռ»-ը։

[1] Սիմեոն Երևանցու ստեղծագործությունների թվին են պատկանում, բացի «Ջամբռ»-ից, երկու հատորանոց «Քարոզագիրք»-ը, երկու հատորանոց եկեղեցական «Տոնացույց»-ը, «Լուծմունք արտաքին գրոցն Պորփիւրի», «Լուծմունք Դաւթի Անյաղթի Հինգ սաա-ծիցս», «Գիրք աղօթից, որ կոչի «Զբօսարան հոգևոր», դավանաբանական-աստվածաբանական բովանդակություն ունեցող «Գիրք, որ կոչի Պարտավճար», «Գրքոյկ մեկնութիւնք» (խոսքը մեր թվականության 5 դարում ապրող նոր-պղատոնական փիլիսոփա Պրոկղին վերագրվող «Institutiones theologicae», աստվածաբանական գնախոսության մասին է, որի նոր թարգմանության համար Սիմեոն Երևանցին աշխատանքներ է կատարել և այդ առթիվ մեկնություններ գրել), «Յիշատակարան»-ը և «Տաղարան փոքրիկ շարահիւսեցեալ ի Սիմէոնէ Երրորդ Կաթողիկոսէ յայլ և յայլ ստեղծողաց» բանաստեղծությունների ժողովածու։

«Ջամբռ»-ը գրվել է «յամի Տեառն Ներմարմնութեան 1765 թ.», և տպվել է «ի տպարանի Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի», մոտ 100 տարի հետո, 1873 թվականին։ Նրա ընդհանուր վերնագիրը խոսում է արդեն հիմնական բովանդակության մասին. «Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարակարգեալ ի Սիմէոնէ ցաւահար և վշտակոծ կաթողիկոսէ Երևանցւոյս»։

ԱՇՏԱՐԱԿԻ ԿԱՐՄՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ (Է դար)

Նկարիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ

[illegible]

ԵՂՎԱՐԴԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ (1321 թ.)

Նկարիչ՝ ԴՐԻԳՈՐ ԱՎԱԳՅԱՆ

«Ջամբռ»-ի բովանդակությունը կարելի է բաժանել երեք հիմնական մասի.

1. Համառոտ պատմություն Հայ Եկեղեցու և նրա աթոռանիստ կենտրոն Ս. Էջմիածնի.

2. Պատմություն Ս. Էջմիածնի տնտեսության.

3. Համառոտ շարադրություն տարբեր ժամանակներում պարսկական և թուրքական իշխանությունների կողմից Էջմիածնի վանքին տրված բոլոր հրովարտակների և պաշտոնական այլ գրություններ։

Այս հանգամանքն արդեն իսկ ցույց է տալիս, որ «Ջամբռ»-ը միաժամանակ Հայ Եկեղեցու և Հայաստանի տնտեսության պատմության կարևոր սկզբնաղբյուրներից մեկն է հանդիսանում։

Դեռ ԺԹ դարի սկզբներին, Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցն իր «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ դաւառացն Արարատայ» գրքի մեջ բազմաթիվ տեղեկություններ է քաղել Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ից, որ այն ժամանակ ձեռագիր վիճակի մեջ գտնվում էր Էջմիածնի մատենադարանում, այնուհետև 1873 թվականին «Ջամբռ»-ի առաջին հրատարակությունից հետո, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը օգտվել է նրանից և իր «Ազգապատում»-ում գրել է Սիմեոն Կաթողիկոս Երևանցու կենսագրությունը[2]։

«Ջամբռ»-ում Հայաստանի հողային հարաբերությունների մասին խոսվող նյութերի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ա. Ավդալբեկյանը։ Նա այդ առթիվ 1929 թվականին հոդված է գրել «Նորք» ամսագրի երկրորդ համարում, «Բահրան և մուլքը XVII—XVIII դարերում» վերնագրով։ 1940 թվականին «Ջամբռ»-ի հողային հարցերի վերաբերյալ երկրորդ հոդված է գրում Ս. Պողոսյանը։ Նույն տարում այդ մասին աշխատություն է հրատարակում նաև Բ. Մ. Հարությունյանը։

Բոլոր այս ուսումնասիրությունները «Ջամբռ»-ի մասին, իհարկե, կարևոր ներդրումներ էին Հայ Եկեղեցու և Հայաստանի էկոնոմիկայի պատմությունն ուսումնասիրելու գործում։ Բայց «Ջամբռ»-ի արժեքավորումը դրանով չէր կարելի սահմանափակել։ «Ջամբռ»-ի պարունակած նյութերի մեծ մասը լինելով Հայաստանի հողային հարաբերությունների պատմություն, միաժամանակ պատմություն է նաև Պարսկաստանի հողային հարաբերությունների մասին (ԺԶ—ԺԸ դարերում առանձին խանությունների բաժանված Արևելյան Հայաստանը պարսկական պետության մի մասն էր կազմում), հետևաբար անհրաժեշտ էր «Ջամբռ»-ը ծանոթացնել գիտական լայն շրջաններին, նրա վրա հրավիրել արևելագետների ուշադրությունը։ Այս հանգամանքը նկատի առնելով, ակադեմիկոս հայագետ հանգուցյալ ակադեմիկոս Ստեփան Մալխասյանցը, որ հայտնի էր միջնադարյան հայկական աղբյուրների գրաբարից ռուսերեն լեզվի հմուտ թարգմանություններով, 1935 թվականին ձեռնարկում է «Ջամբռ»-ի ռուսերենի թարգմանությանը և այն ավարտում 1940 թվականին։ Թարգմանչին, դժբախտաբար, չի հաջողվում աշխատությունը լույս ընծայել։ Տարիներ անց, Պ. Տ. Հարությունյանը խմբագրում է Մալխասյանցի թարգմանությունը, հրատարակության առթիվ նախաբան գրում և այն հանձնում տպագրության, որ և լույս է ընծայվում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելյան ինստիտուտի կողմից Մոսկվայում 1958 թվականին։

«Ջամբռ»-ի ռուսերեն հրատարակած իր նախաբանում Հարությունյանը շարադրում է Հայ Եկեղեցու պատմությանը վերաբերող «Ջամբռ»-ի առաջին տասներկու գլուխների համառոտ բովանդակությունը։ Այնուհետև նա անցնում է գրքում իրեն հետաքրքրող բուն խնդրին՝ Հայաստանի հողային հարաբերությունների պատմությանը։ Այստեղ Հարությունյանը, բացի Ջամբռից, օգտագործել է բազմաթիվ այլ աղբյուրներ և դրանց հիման վրա գրել է Պարսկաստանի իշխանության տակ գտնվող Արևելյան Հայաստանում տարածվող հողատիրական ձևերի և հողամասերի գնման ու վաճառման մասին, ինչպես և այն մասին, թե ինչպիսի հարկեր գոյություն ունեին ժամանակին, դրանցից ո՞րն էր Ս. Էջմիածինը վճարում, և որո՞նց համար չվճարելու արտոնություններ ուներ։ Ապա հեղինակը խոսում է Ս. Էջմիածնի վանքի և վանքապատկան գյուղերի գյուղացիների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների մասին։

Պ. Հարությունյանի կողմից հողային հարաբերությունների վերաբերյալ նախաբանում կատարած գիտական վերլուծումները հնարավորություն են տալիս ընթերցողին՝ ճիշտ հասկանալու և գնահատելու այն մեծաքանակ փաստական տվյալները, որ Սիմեոն Կաթողիկոսը գրի է առել իր «Ջամբռ» աշխատությունում։

---

2 Սիմեոն Երևանցու կենսագրությունը գրել է «Ջամբռ»-ի առաջին խմբագիր, Սիմեոն կաթողիկոսի քարտուղար Հովհաննես եպիսկոպոս Գեղամեցին։

Գրքի վերջում կցված են ընդարձակ ծանոթագրություններ, որոնց մեծ մասը գրել է Ա. Մալխասյանցը և հետագայում, թարգմանությունը խմբագրելիս, լրացրել է Թ. Հարությունյանը։

Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ը գրել է երկարատև, տքնաջան աշխատանքներով, ինչպես ինքն է ասում, այդ գրքի կազմումը եղել է իր ուշադրության և հոգսի մշտական առարկան[3]։ Հեղինակի խոսքերից երևում է, որ նա իր աշխատությանը մեծ կարևորություն է տվել, ուստի անհրաժեշտ է իմանալ, թե «Ջամբռ»-ը գրելով, Սիմեոն Երևանցին ի՞նչպիսի նպատակներ է հետապնդել։

1441 թվականին Կաթողիկոսական Աթոռը Կիլիկիայից փոխադրվում է Ս. Էջմիածին։ Սկսվում են Մայր Աթոռի վերականգնման աշխատանքները։ Այդ գործով զբաղվող կաթողիկոսները շատ լավ էին հասկանում, որ առանց տնտեսական հիմքի, դժվար է բարձրացնել Ս. Էջմիածնի հեղինակությունը որպես Ամենայն Հայոց Հայրապետության համազգային աթոռանիստ կենտրոնի, ուստի ճիգ ու ջանք չէին խնայում ուժեղացնելու Մայր Աթոռի տնտեսական հզորությունը։ Սիմեոն Երևանցու կաթողիկոսության ժամանակ Ս. Էջմիածնի տնտեսությունը հասնում է իր ծաղկման։ Դրա հետ միասին, մեծանում են նաև Մայր Աթոռի դիրքն ու անունը. «...Սուրբ Աթոռս է շնորհօք Աստուծոյ մեծանուն և հռչակեցեալ,— գրում է Սիմեոն Երևանցին,— լցեալ միաբանիւք և պէսպէս պաշտօնէիւք, պերճացեալ երևելի զարդուք և կահիւք, ճոխ փառօք և անթագուցանելի հանդիսիւք, ունօղ բազմապիսեաց ելից և մտից։ Եւ վերջապէս գոլով քաղաք ի վերայ լերին, որ ոչ կարէ թագչիլ ըստ Տեառն բանիւն»[4]։

Խոսելով Մայր Աթոռի նյութական վիճակի այդպիսի բարելավման մասին, չպետք է մոռանալ այն դժվարին պայմանները, որոնց մեջ ապրում և գործում էին Սիմեոն կաթողիկոսին նախորդող կաթողիկոսները և հենց ինքը՝ Սիմեոն կաթողիկոսը։

Մայր Աթոռը Ս. Էջմիածնում հաստատվելուց հետո, շուրջ 323 տարի (մինչև Սիմեոն Երևանցու կաթողիկոսության շրջանը), շարունակ ընկնում էր մերթ շահական Պարսկաստանի իշխանության տակ, մերթ՝ սուլթանական Թուրքիայի, որի հետևանքով անընդհատ կողոպուտի և ավերածության էր ենթարկվում, երբեմն այն աստիճանի, որ թվում էր, թե Մայր Աթոռի վերջնական անկումն անխուսափելի է։ Ահա, այդպիսի ծանր պայմաններում, ձգտելով վերանորոգել Հայրապետական Աթոռը և նրա համար տնտեսական ապահով վիճակ ստեղծել, կալվածներ, հասութաբեր գյուղեր, տներ և խանութներ գնելիս. կամ նվեր ստանալիս, կաթողիկոսներն աշխատում էին այն վավերացնել շահական, սուլթանական հրովարտակներով և այլ պաշտոնական հրամանագրերով։ Ճիշտ է, շատ դեպքերում այդ փաստաթղթերը, երկրի քաղաքական դրության փոփոխման պատճառով, կորցնում էին իրենց արժեքը, բայց երբեմն էլ, տասնյակ տարիներ անցնելուց հետո, ուժի մեջ էին մնում և օգտագործվում իրար հաջորդող կաթողիկոսների կողմից։ Ինքը Սիմեոն կաթողիկոսն օգտագործել է իր նախորդներից մնացած հրովարտակները և հարկատու է դարձրել Մայր Աթոռին Օշական, Աշտարակ. Աղավնատուն, Եղվարդ և այլ գյուղեր, որոնք, մինչև այդ, հարկատու էին պարսկական և թուրքական զանազան ցեղերին և պաշտոնյաներին։ Նա հրովարտակների ուժով ազատել է նաև Խոր Վիրապ վանքին պատկանող մի քանի գյուղեր թուրքական Բայիդ կոչվող ցեղից[5]։

Մեծ կարևորություն տալով անցյալից մնացած կալվածային և այլ ունեցվածքային փաստաթղթերին, ինչպես և մտածելով Մայր Աթոռի ապագայի տնտեսական վիճակի բարեկեցության մասին, Սիմեոն Երևանցին հավաքել է Ս. Էջմիածնի արխիվում պահպանված բոլոր հրովարտակները և դրանց հիման վրա կազմել «Ջամբռ»-ը, ինչպես ցույց է տալիս գրքի ընդհանուր վերնագիրը։

Սիմեոն Երևանցին խորապես համոզված էր այն բանում, որ Էջմիածնի կաթողիկոսը Հայ Ազգի Գլուխն է և, որպես այդպիսին, պատասխանատու է նրա բախտին։ «Թեև,— գրում է նա իր մի կոնդակում,— կործանվել է Հայոց թագավորությունը և հայերն ընկել են օտարների իշխանության տակ, բայց մնացել է հայ ժողովրդի հոգևոր իշխանը՝ հանձին Ամենայն Հայոց Պատրիարք Կաթողիկոսի[6]։ Եվ որովհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսի աթոռանիստ կենտրոնը Ս. Էջմիածինն է, ապա Էջմիածնի Հայրապետական Աթոռն առաջնակարգ Աթոռ է, իսկ այնտեղ նստող կաթողիկոսը Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի Գերագույն Պետն է, որին պարտավոր են ենթարկվել մյուս կաթողիկոսները։ Չնայած,— զարգացնում է իր այդ գաղափարը Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում, — Ս. Էջմիածնի կաթողիկոսից բաժանվել են Սսի, Գանձասարի և Աղթամարի կաթողիկոսները, «... Սակայն Էջմիածնանիստ կա-

[3] «Джамбр», Москва, 1958 г., стр. 69.

[4] *Սիմեոն Երևանցի, «Ջամբռ», Վաղարշապատ, 1873 թ. (Տե՛ս գրքի առաջաբանը)։*

[5] «Джамбр», стр. 105, 106։

[6] А. Р. Иоаннисян, «Иосиф Эмин», Ереван, 1945 г., стр. 171.

թողիկոսն յառաջ և յետոյ և մինչև ցարդ՝ շնորհօքն Աստուծոյ է նախապատիւ, գերագահ, հռչակաւոր և անուանի քան զայլսն ի յամենայն ազգս և է սիրելի և ահարկու ի վերայ ամենեցուն, որ եթէ հարկն պահանջիցէ և գիրաւունս ունիցի, կարէ և բանիւ առնել զմիւս կաթողիկոսութիւնս և լուծանել ի կարգէն. նմանապէս զեպիսկոպոսունս և զայլս կարգաւորսն նոցին։ Բայց նոքա ոչ բնաւ և ոչ կարեն իսկ ձեռն ածել ի կաթողիկոսն էջմիածնի, և ոչ ի կարգաւորս և յաշխարհականս նորին վիճակի»[7]։

Ուրեմն,— եզրակացնում է Սիմեոն կաթողիկոսը,— էջմիածնի Աթոռի հոգևոր իշխանությունը պետք է տարածվի, առանց բացառության, այն բոլոր տեղերում, որտեղ կա Հայոց Եկեղեցի և ուր ապրում է Հայ Եկեղեցու դավանության հետևող հայ ժողովուրդ։

Ահա թէ ինչո՞ւ է Սիմեոն Երևանցին հաճախ այնքան վրդովմունքով և դառնությամբ խոսում Ս. էջմիածնի գերագահ կաթողիկոսական Աթոռի հանդեպ Սսի և Աղթամարի Աթոռների բռնած խռովարար դիրքի մասին։ «Արդ, եթէ ճշմարտութեան աշակերտք էին և իրաւանց հետևողք վարդապետք Սսայ և Ախթամարու,— գրում է Սիմեոն Երևանցին,— ի վերանորոգիլ Աթոռոյս Հայոց էջմիածնի, պարտ էին բառնալ զանհիմն զհետնարոյս և զպատահանիստ կաթողիկոսութիւնս իւրեանց և հետևիլ և հնազանդիլ արմատոյ, հիմնահաստատ և բնիկ Աթոռոյս իւրեանց և սմա նստող կաթուղիկոսին, որպէս հետևցան էջմիածնայինքս նոցա՝ և լուեցին այնքան ժամանակ»[8]։

Անհրաժեշտ է նշել, որ Սիմեոն Երևանցին Կաթողիկոսական Աթոռ նստելու իսկ օրվանից մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց «Ջամբռ»-ում արտահայտված այս մտքերին։ Նա վճռական պայքար մղեց Սսի, Գանձասարի, Աղթամարի կաթողիկոսների դեմ, որոնք փորձում էին գրավել էջմիածնապատկան թեմերը և ներքին երկպառակություններով թուլացնել Հայ Եկեղեցու միասնությունը։ Այդպիսիների գործունեությունը Սիմեոն Երևանցին համարում էր դավադրություն՝ հանդեպ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի։

Սակայն սխալ կլիներ կարծել, թե Սիմեոն կաթողիկոսը միայն Հայ Եկեղեցու ընդհանուր շահերը նկատի ունենալու պատճառով էր, որ պայքարում էր Սսի և Գանձասարի կենտրոնախույս այդ ոտնձգությունների դեմ։ Կար և մի այլ կարևոր պատճառ։ Ապրելով դառն և նեղ ժամանակներում, երբ հայ ժողովուրդը կորցրել էր իր պետական անկախությունը, ցրվել էր ամբողջ աշխարհով մեկ, Սիմեոն Երևանցին չէր գտնում մեկ ուրիշ և ավելի աղդեցիկ միջոց ազգապահպանման, քան էր ողջ հայության համախմբումը Մայր Աթոռ Ս. էջմիածնի շուրջը[9]։ Սիմեոն Երևանցին այդ տեսակետը հիմնավորում էր նրանով, որ միայն դարավոր ավանդություններով, Հայրենիքի ու Եկեղեցու պաշտպանների արյամբ սրբագործված Ս. էջմիածինը, որպես աստվածակառույց Լուսավորչահիմն Աթոռ, կարող է իր շուրջ համախմբել հայ ժողովրդին և զորավիգ լինել նրա ազգապահպանմանը, իսկ մյուս Կաթողիկոսական Աթոռները, որոնք գտնվում են Մայր Հայրենիքից հեռու, օտար երկրներում, ի վերջո, դատապարտված են ոչնչացման, իսկ նրանց ապավինած հայությունը՝ օտար տարրերի հետ ձուլման։ Որպես օրինակ, Սիմեոն Երևանցին գրում է, որ երբ Կաթողիկոսական Աթոռը տեղափոխվեց Հռոմկլա (Կիլիկիա), մեր ժողովուրդն աստիճանաբար սկսեց գաղթել այնտեղ։ Հոգևորականությունը և աշխարհականները, նույնիսկ, որոշ ժամանակ այնտեղ մեր թագավորությունը հիմնեցին, բայց քանի որ հողը հունական էր և բնակված էր հույներով, ուստի մեր գաղթականները խառնվեցին նրանց, ընդունեցին նրանց սովորությունները, բարքերը, լեզուն, հագուստը, կենցաղը այն չափով, որ միայն «հայ» անունով և Գրիգորյան (այն էլ ոչ բոլորը) դավանությամբ էին մեզ պատկանում, իսկ մնացած ամեն ինչով հեռացվել և առանձնացվել էին Հայրենիքում մնացող հայերից։ Դրա հետևանքով Կիլիկիայի և բուն Հայաստանի միջև ծագեց մեծ օտարացում[10]։

Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում տալով Հայ Եկեղեցու պատմությունը, որքանով նա կապված է Ս. էջմիածնի հետ, այնուհետև շարադրելով Սսի, Գանձասարի և Աղթամարի կաթողիկոսների դեմ էջմիածնի կողմից մղվող պայքարի մանրամասն պատմությունը, նպատակ է ունեցել մի կողմից մեծացնել Ս. էջմիածնի նշանակությունը և

7 «Ջամբռ», էջ 54—55։

8 Անդ, էջ 54։

9 Սիմեոն Երևանցին հետզհետե հզորացող Ռուսաստանի հետ որոշ հույսեր էր կապում։ Այդ նպատակով նա Ռուսաստան էր ուղարկել Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին (որ հետագայում դարձավ հայ ազատագրական պայքարի պատմության ականավոր դեմքերից մեկը), բայց, որպես փորձված քաղաքական գործիչ, չտեսնելով իրական նախադրյալներ հայ ժողովրդի շուտափույթ ազատագրման, գործում էր վերին աստիճան զգույշ կերպով։

10 «Джамбр», стр. 124, 125 (բառացի մեջբերում չէ)։

այն դարձնել իրրև ընդհանուր հայությունը միացնող մի նվիրական կենտրոն, և մյուս կողմից պաշտպանել Մայր Աթոռի ընդհանրական, համազգային իրավունքները։

«Ջամբռ»-ը գրելու պատճառներից մեկն էլ այն չերմ, համարյա պաշտամունքի հասած սերն էր, որ Սիմեոն Երևանցին տածում էր դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը։ Նա ուզում էր, որ ճիշտ այդպիսի պաշտամունքի առարկա էլ Մայր Աթոռը դառնա ողջ հայության համար։ Այդ նպատակով Սիմեոն Երևանցին, բացի «Ջամբռ»-ից, գրել է Ս. Էջմիածնին նվիրված բանաստեղծություններ ժողովածու[1] և «ՊարտավՀար» աշխատություն, որոնց մեջ արտահայտելով իր սերը, նվիրվածությունը Մայր Աթոռի հանդեպ, միաժամանակ կոչ էր անում հայությանը՝ ազգային միությունը պահպանելու համար շարունակել Ս. Էջմիածինը։

Մոտ երկու դար է անցել «Ջամբռ»-ի գրվելու թվականից։ Այդ ժամանակամիջոցում շատ բան է փոխվել Հայ Եկեղեցու կյանքում, բայց այն գաղափարները, որոնք արծարծվել են Սիմեոն Երևանցու կողմից «Ջամբռ»-ում, չեն կորցրել իրենց նշանակությունն ու խորհուրդը։ Մեր օրերում, երբ Անթիլիասում գործող հոգևորականությունը, հակառակ Սփյուռքի հայության կամքի և շահերի, բռնել է Հայ Եկեղեցու միասնությունը քայքայողի և հայ ժողովրդի ընդհանուր շահերին դավաճանողի վտանգավոր ուղին, մեծ հայրենասեր Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբռ» աշխատությունը շատ կողմերով ուսանելի և դաստիարակիչ է։ Հայ Եկեղեցու ներկա տագնապալից օրերին, նրա ընթերցմամբ, հայ եկեղեցականները և Հայ Եկեղեցու հավատացյալ զավակները ձեռք կբերեն անհրաժեշտ գիտելիքներ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անցյալի մասին և, տոգորվելով մեր խնկելի նախնիների հայրենասիրական և եկեղեցասիրական ոգով, չանք ու եռանդ չեն խնայի պայքարելու Հայ Եկեղեցու միասնականությունը պառակտող ազգադավ հոգևորականների դեմ։

[1] Տպագրված է Ս. Էջմիածնում երկու անգամ, երկրորդը՝ 1793 թվականին։